շնորհակալ եմ ձեզաննեց, որ գուք՝ ինձ բարի էք
ցանկանում. այն, հնազանդ եմ ձեզ կամքին, և
ընդունում եմ ձեր խօսհուրդներն».

— «Ուղիղ ասացէք, միանում էք ինձ հետ՝ ան-
բաժան սկրով, և ալէտք է կատարիք այն բոլորը՝
ինչ որ ես՝ ձեզ առաջարկեմ»:

— «Այն, այն, և դարձեալ այն. այն՝ ամենա-
կարող Աստուծոյ մէկ անունը վկայ՝ որ իմ խօսքերի
մէջ՝ սուտ չըկայ», վճռական կերպով սատանիսա-
նեց Սիմօնը:

— «Տեսնենք, տեսնենք, Սիմօն ջան . . ես մէծ
յոսեր ունիմ ձեր վրայ . . Բայց՝ գիտիք, մէկ բան
կայ՝ սիրելիս» . . . շարունակեց Օսէփը երբ տեսաւ
որ Սիմօնը՝ յամենալին դէպս՝ միացած է իւր հետ.

— «Ի՞նչ կայ, ասացէք, շատ հետաքրքրական է
ինձ լսել այդ» . . . ասաց Սիմօնը:

— Ես՝ եղբայր, երբէք ձեմ սաւանել, որ գուք՝
ինձ հետ այնպէս վարուեք, ինչպէս առաջնները,
այդ անկարելի բան է, որովհետեւ ձեր բարեկիրու-
թիւնը՝ արդէն ինձ լաւ յայտնի է: Բայց մտածելու
բանն այս է, որ մարդս մի գործ որ անում է,

Հիմքը պէտք է ամօւր բռնէ, թէպէս ես առաջի ժամանակներում անփորձ էի: Ուրեմն՝ ուղիղն ասացէք, միանհում էք ինձ հետ՝ անբաժան սիրով, և պէտք է կատարէք այն բոլորը՝ ինչ որ ձեզ առաջարկեմ»:

— «Այսինքն»

— «Թիսինքն՝ ես ուզում եմ ասել, թէ տարիները, որ գալիս՝ անցնում են մինը միւսի ետեւց և շրջաններ են կազմում՝ կարող են մէծացնել և վուխումնել նաև՝ նոյն խոկ մատուս հասակը, բարձրացնել նրա հասկացողովմիւնը, մինչև անգամ վուխումնել են նաև մարդուս բնաւորովմիւնն էլ: Դրա համար՝ ես ցանկանում եմ գործի հիմքը ամուս բռնէլ, և այդ խոկ խորհրդով՝ ձեզանից էլ խնդրում եմ, որ ինձ ապահովացնելու համար՝ կանխիկ երեք հազար արաւ, և ապա՝ սկսենք շարունակել մեր գործը. համաձայն էք»:

— «Ուրախութեամբ, Օսէփ ջան, թող այդպէս լինի. մըթէ իմ խեղճը մեռած է՝ երբ գուք՝ յեսուն հազար սուբլի՝ գումար զրամ գործի մէջ էք մտցնում և ինձ էլ առանց՝ մի որ և է դրամագլխի ընկեր էք անում, ես՝ յանձս չառնեմ՝ երբեւ գրաւ ձեզ երեք հազար սուբլի վճարելու»:

— «Ուրեմն գործը վերջացամծ է, սիրելի Սիմօն»:

— «Այն, արդէն խոկ վերջացաւ»:

— «Շատ լաւ. կարող ենք վաղը ձանապարհնենել»:

— «Կարող ենք... բայց՝ նախքան ձանապար-

հորդելներս՝ մեր ընկերական պայմանների մասին՝ պէտք է յայտնեմ ծնողներիս, և աշխատվեմ երեք հազար սուբլի գումարն էլ ձեռք բերել, և անմիջապէս ձանապարհորդել»:

— «Բայց լաւ, Սիմօն ջան, թող կըտան արդեօք քո ծնողները՝ որ օտար երկրում պանդստիս. կամ կ'յօժարին այդ ուղղուած գումարը, — երեք հազար սուբլին՝ միանուագ քեզ յանձնելու»:

— «Ի՞նչ տղայական բաներ ես մտածում Օսէփ, մըթէ, իմ հայրը անգիտ է, որ արգելք զառնայ, երբ տեսնում է, որ մի սուբլի երա որդուն փողի տէր է զարձնում. և մանաւանդ՝ երեք հազար սուբլին էլ որ տալիս է՝ քառապատել, հազարապատիկ շահերութեան իրավուց երա գրաւանը պէտք է մտնի»:

— «Այդ այդպէս է, սիրելիս երեք հազար սուբլին՝ ինչպէս ասացի՝ իմ մօտ կըմնայ մի բանի տարի. և այդ տարիների ընթացքում երբ տեսնում եմ, որ գուշակ հաւատագիտման եղբոր նման՝ աշխատար ինձ հետ, այն ժամանակ նորից յետ կըգարձնեմ այդ գումարն ձեր հօրը. Բայց ովհ գետէ, հայրու կարելի է ուրիշ կերպ գատէ, ու մեր գործը խանգարէ»:

— «Միամիտ կաց, սիրելիս, եթէ հայրս չըհամաձայնի ես կարող իմ նրան համոզել. Ուրեմն՝ հրամանէցէք, գնանք մեր տունը, որպէսզի՝ միաձայն խորհրդով՝ այս մեր ընկերական պայմաններն յայտնենք ծնողիս»:

Նրանք գնացին:

Միւս օրը, առաւօտ վաղ՝ Գրիգոր աղայի զռան
առաջ կանգնած էին երկու թամբած լաւ ձիեր,
և երկու երկուասպագ՝ դռնից դուրս գտնով՝ նստան
այդ ձիանների վրայ և ընկան ձանապարհ։—Մինը՝
Սիմօնն էր, խոկ միւսը՝ Օսէվիք։

Սիմօնի ծնողները թէսէս շմտ շանք էին զըել,
շատ ողբացել, լացել, որսէսպի՝ արգիլեն իրանց
որպուն՝ մի այնախօն՝ օտար և անփորձ մարդու հետ
գործ անելու, որովհետեւ՝ իրանք շատ բաների մէջ
միորձուած լինելով, նուխագուշակում էին, որ այդ
ահսակ մարդկանց մեծ մասը խարդախ են լինում.
բայց լին անէին՝ իրանց մինուաւարին, իրանց աչ-
քերի լուսին, մի հատուիկ՝ քաղցր զաւակին չ'տխրե-
ցնելու, նրա սիրտն չըվերաւորելու համար՝ յան-
ձնեցին այդ երեք հազար բուրլին. որը՝ նրանց
համար՝ գրէ թէ, երեք կոտէկի տեղ էր բռնում.
և խրատեցին, որ այդ գումարը՝ իր ծոցի մէջ՝
սկսէ պահէ, և չըտայ նրան, մինչև որ չըգնայ,
չըտեսնի նրա առև տրական բոլոր գործերն։ Հետե-
ւապէս՝ ծնողական յուզուած սրտերին անգործութիւնն
տալու համար՝ պատուիրեցին, որ լին ժամանակ
իր լիներ Օսէվին հետ՝ հասնում է նրա բնակու-
թիան տեղը՝ շուտով նամակ գրէ իրանց։

Այսպէս՝ ձանապարհ ընկաւ Սիմօնը՝ իւր նոր-
ընտեր եղբօրը Օսէվին հետ։

Մեր այս երկու ձիաւոները նոսաքելով շա-
տունակ առաջ էին գնում՝ անցնելով կամքջներ,
ձիւկելով լեռներ, թռչելով մաշառների վրայից,
և վերջապէս կէս օր էր՝ որ հասան մի խիտ ան-
տառի, որտեղից՝ ոչ կապուտակ երկինքն էր երե-

ում և ոչ փայլուն արև լ. կարծես մուայլ՝ մուլթ
գեշեր լիներ. Սոսկումը պատեց Սիմօնին. նա զո-
դում էր կը ամբողջ մաշմնով ու մտածում էր, թէ՝
արգելօք, եթէ այս աւազակային տեղը մինը հար-
ձակուի մեզ վրայ, մէնք լին պէտք անենք,
քանի ո՞ւ ոչ մի գէնքի կտոր չէր գտնւում մէկ
մօտ գիմագիւլու թշնամուն։

— «Պարոն Օսէվ, գիտէք, զուք լաւ բան ըգոր-
ծեցիք», զառնալով իր ընկերին՝ ասաց Սիմօնը։

— Ի՞նչ պատճառաւ։

— «Որովհէտեւ գուք գիտէնք, որ այս ձանա-
պարհներն խիւկան աւազակային տեղէր են
հապա ինչու արգելք զաւաք գուք կմ ձնողնեվին՝
երբ նոքա լին գէնք էրն առաջարկում»։

— «Միամիտ կաց, Սիմօն, ես՝ այստեղաց բոլոր
աւազակներին, ամէն մի ծառին, ամէն մի քունջ
ու պուճազին ծանօթ եմ. իմ ոսկորներս այստեղ է
հաստաց՝ և իմ հասակ՝ այս անտառներումն է
մէծացել»։

— «Այդ լին ես ասում. մըթէ»... ընդհատեց
Օսէվի խօսքը՝ զոզալով։

— «Ու. սխալ էք. գիտեմ, որ այն ուզում էք
ասել, թէ՝ «ուրեմն աւազակ էք», բայց ոչ. որով-
հետեւ՝ ես շատ եմ սիրում որսորդութիւն, գրա
համար, իմ կեանքի ամինամեծ մասն էլ՝ շարու-
նակ այստեղ եմ անցկացնում՝ գալեր, արջեր և
ուրիշ կենդանիներ սպանելով»։

Սիմօնը որսորդութեան ձայնը որ լաեց, քեզ
հանգստացաւ ու հարցրեց. —

— Շատ իրաւ, եթէ գուք որսորդութեամբ շատ

էք պարապում, ապա ինչու առանց գէնքի դուրս
եկաք՝ այս վայրենի տեղերում»:

— «Ո՛չ, Օսէիթ առանց գէնքի մի բոսէ կեանք
չունի», ասաց նա ու փէշի տակից՝ հանեց սուրբ
պատեանից, ու պսալզացնելով օդի մէջ, դարձեալ
դրեց տեղը:

Սիմօնը ամբողջ մարսնով զողում էր. նա էլ
ըբգիտէր թէ լին աներ. նա հաւատացած էր, որ
անպատճառ մի փորձանք է գալու իր գլխին. իսկ
այդ փորձանքից ազատուելու երբէք չըկար
մի հնար. Նա դանդաղ կերպով գնում էր առաջ,
ձիու կամքին թողնելով սանձը: Նա ընկդժուած
էր խոր մտածմոհքների մէջ. . .

Օսէիթ նկատելով եր ընկերի վախը, նրա մար-
մնի դողումը՝ սկսեց խօսել.—

— «Չ'վախենաս, եղբայր իմ Սիմօն, քանի որ ես
քո հետդ հմ՝ քեզ ոչ մի փորձանք չի՝ պատահել»:

Օսէիթ խօսքերը՝ քիչ հանգստացըին Սիմօնի
բարախող սիրուց՝ Նըանք մտրակելով ձիաններին,
շտամեցին առաջ:

— «Սիմօն ջան, խօսեց Օսէիթ, այստեղ մոտիկը
մի աղբեւր լայ, գնանք այդտեղ քիչ հանգստա-
նանք ու մի փոքր էլ ձաշենք, քաղցած ենք,
իւտոյ՝ շարունակենք նորից մեր հանապարհը. ար-
դէն շորս ժամ մնաց մեր երկրին հասնելու»:

— «Այսու գնանք, ճշշտ որ քաղցած ենք», ա-
սաց Սիմօնը ու շնչուելով ձանապարհից՝ գնացին
աւելի մութ անկիւններ ու կանկ առան՝ մի փոք-
րիկ աղբեւրի մօտ, որը վազում էր մի հաստ ծա-
ռի բնի կողքից: Նըանք ձիաններից վայր իշնելով՝

կապեցին ձիաններին՝ մի խոտաւէտ տեղ ու նըս-
տան այդ Ճլճացող աղբեւրի մօտ. . . պարկերից
հանեցին հաց, պանիր, կարմրացրած միս և մէկ
շեշ էւ գինի, ու սկսեցին ձաշել:

Նոր նրանք մի քանի բրդուձ կերան, յանկարծ
Օսէիթ ձախնեց:

— «Պէհ, Սիմօն, հանիր, հօրդ տուած գումարը
տեսնենք, թէ ճշշտ երեք հազար է, թէ պակաս»:

Սիմօնի վրայ կարծես սառը ջուր լցրին. նրա
դէմքը իսկոյն փոխուեց,, ձոյնի գոյն զարձաւ. նա ոչ
մի բան չըգտաւ պատասխանելու և լուր կացաւ:

— «Չես իմանում, Սիմօն, քեզ հետ եմ. ասում
եմ՝ հանիր, հօրդ տուած փողերը, տեսնենք՝ ու-
ղեղ երեք հազար է, թէ քեզ խարելով պա-
կաս է տուել», հրամայական ձեռով ասաց Օսէիթ:

— «Ո՛չ, նա իմ աշքի առաջ համբեց երեք
հազար ըուրիկ ու յանձնեց ինձ. իմ հալրը՝ եւ
որդում չի խարել», ասաց Սիմօնը դողալով:

— «Գու չես լսում իմ ասածը, ձայնեց Օսէիթ ու
ոտքի կանգնեց՝ սուրը հանելով պատեանից դէհ,
շուր արա, յանձներ, այդ փողերը ինձ, եթէ ոչ
գլուխդ զատում է մարմնիցդ այս սուրը»:

Սիմօնը՝ ոտքերը ընկաւ Օսէիթին, լաց եղաւ.
բայց Օսէիթ զարկեց նրան եր ոտքով ու ձկեց հե-
ռուն, և բարձրացնելով սուրը, որ պէտք է եցէ-
ցներ Սիմօնի գլխին, նա սկսեց աղաղակել.—

— «Ա՛ռ, ահա, քո պահանջած փողերը, և սէր
Աստուծոյ՝ ինձ մի սպանիր, խղճած մատադ հասա-
կիս, աղաչում եմ խնայիր կեանքիս, առ, փողերը
ահա, տալիս եմ»:

Օսէիթ առաւ նըա ձեռքից երեք հազար

ըստին և գրեց գրանք։ Խեղձ Սիմօնին էլ սկսեց
կապել թոկերով այդ աղբեւը մօտ ծառկ՝ հաստ
ոնին, ու ինքը նստելով իր ձիուն, Սիմօնի ձիու
սանձից էլ բռնած, անյատացաւ, այդ խիտ ան-
տառների մէջ։

Դա՞ աւազակ էր։

Թ.

Տեսնենք, թէ Սիմօնը ինչ եղաւ. մնաց ար-
դեօք այդ ծառին կապած, թէ մի որ և է մի-
ջոցով, կամ՝ մի բարի մարդի ձեւքով ազատուե-
ցաւ այդ դառն արկածից։

Ո՛չ, նա զեր կապուած էր այդ ամայի տեղում.
ով կարող էր յանդգնել՝ այդ անմարդաբնակ և
աւազակսին վայրելին մօտենաւ, քանի որ ամե-
նահպոր, ամենաքաջ մաշկանացուն անգամ՝ զեռ
չէր համարձակում, զեր վախ էր զգում իրան՝
այս մութ, և մոռց, և անդնդային անտառում։

Վլայ հասաւ գիշերը. շրջակայքը աւելի մոայ-
լուեց. Սիմօնի աչքերը ուինչ բան չէին տեսնում,
կարծես նա փակուած լիներ մուժ բանդում. իսկ
նրա ականջներին՝ բացի աղբեւը կարկաչելնից,
ու ով սրբի ձայն չէր լսուում. թռչունները անգամ
մախ էին զգում իրանց այսպիսի տեղեր բնակուե-
լու. ուստի՝ ոչ մի թռչուն չէր գտնւում այդտեղ.
շնչաւովի ձայն չէր լսում նա, որպէսզի՝ յոյս ունե-
նար իր փրկութեանը. նա սոսկում էր, թէ աշա՞
ուրէ՝ ուր չէ մինը իրան բոնում, ոչնչացնում է
այս մութ ստուելի մէջ. ուստի նա կաչում էր ծա-
ռին, վախից լացը դադարեցնում և աչքերը լիա-

կում էր, որ չըտեսնի իր կիանքի կորուստ սպառ-
նացող արհավաքներն ։

Կէս գիշեր էր. Սիմօնը այլ չէր կարող զսպել
իր լացը. նա վախը թողնելով մի կողմք, սկսեց
բարձրաձայն լաց լինել, օգնութիւն կանչել, Աս-
տուծոյ ապաւինել. Բայց նրա ձայնին՝ արձագանք
էին տալս՝ միայն հեռու անտառի խորքերից. նա
ալսքան չարչարանքների մէջ՝ դարձեալ չէր գոշա,
չէր զգում և մտաբերում իր տարօրինակ գործերն.
և աշա, յանկալին ծառերի միջից նկատում է, որ
իրանից քիչ հեռու մի մարդկային ստուեր է շար-
ժում, որը կարծես՝ քիչ-քիչ երան էր մօտենում:
Սիմօնի թռչոք բնրանում չորացաւ՝ տեսնելով այդ
երան մօտեցող ստուերին. նա ամբողջ մարմնով
սկսեց դողալ, վաթաթուեցաւ ծառին՝ աչքիրը
չը հեռացնելով շարժուող ստուելըց։ Այդ սոսէին՝
նրա միտքը ընկաւ իւր հանգուցեալ մամի խօսքը,
որ ասում էր շատ անգամ իրան. «Գիշերը որ զուըս
ես գնում, սիրելիս, ակտքէ չըվախինաս մուլդ
խաւարից. իսկ երբ վախեցար, այն ժամանակ՝
սատանան իրա կերպարանքով իսկոյն գալիս է
դէմզ ու քեզ սկսում է վախեցնել. իսկ այդ միջո-
ցին՝ եթէ երեսդ լիած հանես՝ իսկոյն, նա անյա-
տանում է». այսպէս՝ նա մտաբերելով իր մամի
խօսքը՝ ձեռքը շարժեց, որ ուզում էր խաչակին-
քուել, բայց տեսնելով որ ձեռքը չի շարժուու
այն ժամանակ՝ նա գլխի ընկաւ, որ ձեռքերը կա-
պած են ծառի բնին։

—«Ո՞հ, տէր իմ, խղճա ինձ, մի սպանիր», հա-
զիւ լուելի ձայնով աղաղակեղ Սիմօնը, իրը ստուեւ.

ու՝ արդէն կենդանի մարդ դարձած՝ կանգնած էր
Սիմօնի դէմ: Նա հագած էր ոչխարի մորթուց
պատրաստուած մի հաստ մոլտուկ, գլխում ծած-
կած ունէր մի ահագին քեւլահ, մինչի առքերին
իջեցրած, որը նոյնակս պատրաստած էր ոչխարի
մորթուց, և ձեռքն էլ բռնած ունէր մի հրացան:
Նրա քեւլահի տակի պսպղացոյ աչքերից նկատ-
ում էր, որ նա լսկ և իսկ այն Օսէփն էր, որը քիչ
առաջ կողոպտելով Սիմօնին, կապեց նրան այդ
ծառին ու ինքը փախաւ, գնաց. Այս, զա նա էր,
բայց մեր Սիմօնը չէր ճանաչում, որորհետեւ՝ նա
փոխել էր իր հագուստը: Բայց ինչու նա նորից
վերագրած Սիմօնի մօտ, միթէ, նորմ' աչտք է
ընկերանայ՝ նսա հետ:—Ո՛, նա առանց ձայն
հանելու՝ քակեց Սիմօնի կապանքները, և ձեռքից
բռնէլով տարաւ նրան մի ճանապարհի մէջտե-
ղում կանգնեցրեց. իսկ այդ ժամանակ՝ Սիմօնը ոչ
մի ձայն չէր հանում, այլ՝ լուռ հետեւմ էր նրան:

—«Ահա, եթէ՝ այս ճանապարհով գնաս, շարու-
նակեց Օսէփը՝ ցոյց տալով Սիմօնին արևմտեան
կողմը, կըզնաս ուզգակի քո հայրենիքը. իսկ եթէ՝
այս ճանապարհով շարունակես քո ընթացքը, ցոյց
տալով արեւելքը, կըզնաս օտարումիւն»:

—«Ես՝ շատ շնորհակալ եմ ձեղանից՝ ով բարի
մարդ, բայց միայն՝ լնզրում եմ ձեզանից՝ ով ա-
սէք ինձ, ով էք դուք», հարցըց Սիմօնը:

—«Ես՝ Աստուածանից ուղարկուած մի բարի
հրեշտակ եմ, եկայ ձեզ ազատելու այդ դառն
վիճակից. և այժմս նորից վերանում եմ երկինք»,
ասաց Օսէփը և անդադացաւ լսիս անտառների

միջում:

Սիմօնը զարմացաւ, թէ՝ լինչպէս մի վայրկեա-
նում անյայտացաւ իր աչքից: «Ճիշտ որ՝ դա Աս-
տուած է, կամ Աստուածոյ որպիւ», ասում էր Սիմօնը
ինքն իրան, ու մթութեան մէջով ընթացաւ ա-
ռաջ՝ դէպի օտարութիւն. որովհետեւ՝ նա մտածում
էր, որ «Եթէ ես գնամ հայրենիք, ինչ եմ պա-
տասխանելու իմ ծնողներիս. լաւ է որ գնամ օտա-
րութիւն, փող աշխատեմ հօրս տուած գումարը
վերապարձնեմ, ու այն ժամանակ՝ աւելի վսահ
և աւելի ուրախ գէնքով ներկայանամ նրանց»:

Սիմօնը այդ վայրենի անտառներից անցնելով՝
արդէն բացուել էին նրա առաջ, հարթ և գաշ-
տային ճանապարհներ. այժմ նա առանց երկիւզ
կրեյու ընթանում էր առաջ: Արևելքում՝ հօրե-
զոնը քեչ-քեչ սպիտակում էր: Այդ ևս աւելի ուրա-
խացուց Սիմօնին, որովհետեւ՝ նա ազատ կարող էր
տեսնել իրը շրջակայքի սարերը, ձորերը, զաշտերը,
հովիտները, որոնք՝ անձանօթ լինելով՝ հետաքր-
քիր էին դառնում նրան:

Այսպէս նա առաջ գնալով՝ պատահեցաւ մի
գեւղացու, որը երկու աւանակ առաջ ձգած՝ գալիս
էր անտառից փայտ տանելու: Անմօնը ուզեց նրա-
նից իմանալ, թէ՝ այս ճանապարհը ուր է տանում
իրան: Եւ նրան բալովելուց և պատասխանը առ-
նելուց յիտոյ, Սիմօնը հարցըց:

—«Բարի գեւղացի, ինչըսում եմ ասես, այս ճա-
նապարը ուր է տանում ինձ»:

—«Պու զարմիք ես», նախքան պատասխանելը
Սիմօնի խօսքերին, հարցըց գեւղացին.

— «Այս, ես այստեղացի չեմ»:

— «Այս Ճանապարհը՝ քեզ տանում, հասցնում է մի մեծ ու հալուստ քաղաքի, որտեղ աղքատին անգամ վորդի տէր է դաշճնում», պատասխանեց գլւղացին:

— «Դեռ շատ հեռու է այդ քաղաքը», հարցրեց Սկմօնը ուրախացած.

— «Ո՛չ, այստեղից մինչի այնտեղ՝ արդէն շատ քիչ է մնացել, հնինք ըստէ հազիւթէ տևէ տևէ», պատասխանեց գլւղացին և չիւ, չիւ, ասելով, խիեց աւսանակներին իւր ձեռքի բռնած Ճիպոռով՝ ու անյաւ Սկմօնից:

Սկմօնը շտապ-շտապ ընթացաւ առաջ. և Ճիշտ գլւղացու ասածի նման՝ մի քանի բուլչում հասաւ այդ քաղաքին. Նա իր կեանքի մէջ՝ չէր տեսած այդպիսի մեծ ու գեղեցիկ տներով և պարտէզներով զարդարուած մի քաղաք, որի փողոցներում ժողովրդի բազմութիւնը այնպէս էր, ինչպէս եկեղեցու գաւթում՝ մեծ տօն օրերում:

Սկմօնը որոշեց, որ այս քաղաքի մէջ ինքը ուրիշ գործ չի կարող անել, բացի մշակութիւնից. Եւ մշակութիւնն էլ այստեղ մեծ դէր էր կատարում, որովհետեւ բնակիչները մեծ մասը աղաներ էին. . Նա փոխելով իր վրայի հագուստը՝ հազաւ մշակի շորեր ու գնաց կանգնեց շուկայօւմ:

Գլւղացու ասածի նման՝ ինչպէս վերը գրած էի, Սկմօնը չորս տարուայ ընթացքում կատարեալ գործարի տէր զարձաւ. Նա բացի այն եղեք հազարից, աշխատել էր նաև տասը հազար ըուբեր, բայց և այնպէս շընայած որ մեծ քաղաքի էր հասել,

Նորից միտքը փոխեց, և որոշեց գնալ հայրենիք, որովհետև նա շատ էր կաթոսացել իր ծնողներին. Նմանապէս այդքան տարուայ ընթացքում ոչ մի նամակ չէր գրել իր ծնողներին. և ծնողներն էլ չըգիտէին իրանց որդու որտեղ լինելը, որպէսզի՝ կարողանալին, կամ նամակ գրել և իմանալ նրա դրուժիւնը և կամ՝ հակառակ գէտպում զայլին իրանց սիրելի որդուն տեսնէին. Նըանք՝ այնպէս էին գուշակում, թէ իրանց որդին այս աշխատահումը չէր, նա երկնքումն էր և ոսկորներին՝ գերեզմանի ցուցայ յատակում:

Սկմօնը վճռեց վաղը անպատճառ հայրենիքի հանապարհը բռնել. և նա այդ մտապրութեան մէջ՝ ուզեց լուրջ կերպով զննել այդ քաղաքի բարոյ դաշտերը, ձորերը, անտառները ու վտակները, և զնաց ման գալու. Նա երկար ման գալուց յետոց, նստեց մի բլակի տակ, հանեց իւր փողի քսակը և ուզեց երկրորդ անգամ հաշուել ու տեսնել, թէ Ճիշտ տասներեք հազար է իւր ունեցածը. և նա՝ դատարկելով քսակից փողը գետնու վրայ ու չը-խկ-չը-խկ համրելով ցկու՞ էր նօրեց չը-խկ քսակի մէջ:

Մի ասիր, այդ միջոցին մինը քնած է լինում բլրի գագաթի վրայ, և չը-խկ-չը-խկոցի ձայնը լսելով, արթնանում է և ցած նայելով, լինչ է տեսնում, մինը նստած մարգագետնի վրայ և կողքին էլ վեղած անթիւ ոսկի՝ հաշում է, Նա մատը կծում է, տեսնելով այդքան ոսկին. և ուզում էր գնալ՝ յարձակուել նրա վրայ ու խլել ոսկին, բայց չէր համարձակում, որովհետև՝ գէնք չունէր, և

վախենում էր կեանքի կորուստից, թէ մի գուցէ, նա զինուած լինի և իրան սպաննէ, «Բայց չէ, այդպէս չի լինիլ. մարդս լիելքով պէտք է գործ անէ», ասաց նա ինքն իրան ու վեր կենալով զգուշութեամբ հեռացաւ այդ բլուրեց ու գնաց մտաւ մի փոսի մէջ, և այնտեղ մի քանի հատ քար հաւաքելով՝ զրեց միատեղ, և շուրջն էլ մի քանի տեսակ զբամներ ցանցնելով, հեռացաւ, գնաց դէսի քաղաքի կողմը ու մի սրատի տակ նստեցաւ, յետոյ՝ իւր ոտքի մէկը սկսեց փալառներով փաթաթել, և մի փայտ էլ ձեռքը առնելով՝ կադ և կադ զիմեց դէսի այն գլուրի տակ նստող մարդուն, այն է Սիմօնին. Սիմօնը՝ այդ ժամանակ միշտ էր կացել բլուրի տակից ու գալիս էր քաղաք: Հանդիպելով նրանք միմէտանց՝ կանգ առան ու բարեկցին:

— «Այդ ինձ է պատահել ձեր ոտքին՝ այ մարդ», հարցրեց Սիմօնը՝ նրա փաթաթածած ոտքին նայելով:

— «Անգութ աւազակին հրացանը տրաքուեց ու նրա գնդակը խրուելով իմ ոտքի մէջ՝ ահագին վէրք բաց արեց, ալատասիանեց Տիգրանը՝* իւր փայտի վրայ յինուելով:

— «Աստուած ողորմէլ է քեզ, բարի մարդ, որ գնդակը ոտքիտ է դիպել. Աստուած ու արացէ, եթէ գլուխիա, սլատիդ կամ մի ուրիշ վտանգաւոր տեղիտ դիպէլը՝ այն ժամանակ անյուսալի էր քո կեանքը»:

— «Այն, շատ հաւանական է. բայց թողնենք

* Ծանօթական. բուն անուան բէզ՝ Տիգրան անուանեցին նրան:

այդ խօսաքցութիւնը, ես քեզ մէկ ուրիշ խօսք ունիմ ասելու»:

— «Պատրաստ եմ լսելու»:

— «Ե՛կ այս Ճանապահի կողքին, ասաց Տիգրանը, ու Սիմօնի թելից բռնելով տարաւ Ճանապահի կողքին: Վերջապէս՝ իմ սրտի գաղտնիքը ստիպւած պէտք է ճեզ յալոնիմ, ոլ բարի մարդ, շարունակեց նո. և յուսով իմ, որ ճեզ մէջ կըպահեք՝ մինչև մութ գերեզման լջնելը»:

— «Հաւատացըր, որ իմ մէջ բեւրաւոր գաղտնիք կան. և մէկը մինչև օրս չէ դուրս եկած, և դարձեալ կըմնան յաւիտեան»:

— «Սիրելիս, շարունակեց Տիգրանը՝ ցածր ձայնով, ահա, երկու ամիս է, որ ամէն գիշեր երազում երկուում է Քըլստոս ինքը ու ասում է ինձ. «սկրելի Տիգրան. դու պէտք է բաղդաւորուիս. այս ինչ տեղը՝ երկու սաժէն ու կէս խորկութեան մէջ՝ պղինձով ուկի է թաղուած, որը քեզ է պատկանածուիս. այս կարող եմ փորել, քանի որ՝ ոտքս այս գրութեան մէջն է. ուստի՝ քեզ եմ գիմում, որպէսզի՝ դու փորես՝ հանես այդ պղինձով լի ոսկին. ոը՝ յետոյ սկսենք միմէտանց մէջ հալաւ բաժին անել. համաձամն ես»:

— «Ուրտեղ է թաղուած այդ ոսկին. գիտե՞ս նրա տեղը». հարցրեց Սիմօնը հետաքրքրութեամբ.

— «Այն, գիտե՞մ, բայց քեզ չեմ ասել, մինչև որ խօսք չըտաս»:

— «Ուրախութեամբ, սկրելի բարեկամ, ուրախութեամբ. Գնանք միասին, դու ինձ տեղը ցոյց

տուր, ես կ'աշխատեմ վորել. իսկ երբ հանեցի, այն ժամանակ՝ արդարասէր զոգուով, համահաւասար բաժանենք միմեանց մէջ», ուրախացած ասաց Սիմօնը:

— «Զէ, այդպէս խօսելով ինձ չես կարող հաւասացնել. երդութիւն Աստուծոյ անունով, որ գում այդ փողը հալալ բաժին պէտքէ անես», ասաց Տիգրանը:

— «Երդում եմ երկնակին թագաւորի անունով, որ ես հալալ բաժին անեմ այդ իմ գտած պղինձով փողը, ասաց Սիմօնը:

— «Ուրեմն գնանք, սկըելթո, ես քեզ ցոյց կ'ուամ որտեղ որ թաղուած է ոսկին. բայց՝ սպասի՛, որսվ-հետեւ՝ փորելու համար մեզ պէտքէ մի թի, մի բահ և մի փայտատ. գնայ, այդ մօտիկ խանութում, ես, այնտեղ դրել եմ այդ երեքն էլ. և հենց որ իմ անունը տաս խանթի տիրոց՝ նա իսկոյն յանձնում է քեզ՝ այդ գործիքները»:

Սիմօնը՝ թռչունի պէս՝ թռաւ, գնաց՝ աւաւ խանութից այդ գործիքները՝ ու վերադառնալով Տիգրանի մօտ, միասին դիմեցին ոսկու թաղուած տեղը:

Սիմօնը փոխեց հալրենիք գնայու մտադրութիւնը, որովհիտեւ, նրա առաջ՝ մի ուրել գործ բացուաւ: «Աստուծով եթէ յաջողուի, այն ժամանակ տասներեք հազարը՝ կ'մինի հարեւը հազար: Աւելի փողը խօմ փոր չի ծակի: Այսքան որ կեցայ, մի քանի ծը էլ կը կենամ», ասում էր Սիմօնը լինքն իրան:

Եթի մօտեցան թաղուած ոսկու տեղին՝ Տիգրանը ասաց Սիմօնին:

— «Գիտի՞ս, Սիմօն, կասկածառը չըպէտք է լինիս ոսկու թաղուածի վրայ, իմ ասածները բոլորն էլ հշմալիւ են. քի: յետոյ յայտնի կը լինի. այնտեղ, ոսկու թաղուած տեղից ես ամենայն օր փող եմ գտնում. իմ կարծիքով այդտեղ այնքան շատ կայ փող, որ սղինձը չըհաւքերով՝ գուբա են գալիս հողի երեսը. չըգիտիմ, ես այգաէս իմ համոզուած»:

— «Զէ, սիրելին, թիչ կայ չըհաւատալու՝ երբ Փրկուոս ինքն է երեացել երազումդ», ասաց Սիմօնը:

Նրանք գնալով՝ կանգ առան այնուեղ՝ ոդանեց որ Տիգրանը բարեկրով նշան էր արել:

— «Ահա, տես, այսուեղ է թաղուած, սիրելի Սիմօն, այս քարենքն էլ ես եմ դրել որպէս նշան»:

— «Ճշշո որ թաղուած է, Տիգրան, ահա, ես գտա՞մ մի քսան կոպէկանոց, բարձր ձայնով ասաց Սիմօնը՝ վերցնելով գետնից փողը: — Ահա, մի բուր-լիանոց էլ, — ահա, տասնեհինգ կոպէկանոց էլ, ահա, հինգ բուրլիանոց էլ», և այսպէս՝ գտնելով գտնելով՝ ուրախութիւնից չըգիտիք, թէ թիչ անէր և գտած փողը՝ ցկում էր գրանել:

— «Տեսմը, Սիմօն, ինչպէս իմ խօսքերը չիշտ են»:

— «Այս, այս, Տիգրան ջան, բայց հարկաւոր է շտապել, ժամանակ չըկորցնել. գանձը հանելուն աշխատենք», ասաց Սիմօնը ու գործիքները առնելով սկսեց շտապ-շտապ փորել՝ ուրտեղ ոսկին էր: Բայց քանի որ Սիմօնը խփում էր փայտատը, ոսկին աւելի խորն էր էջնում, Երբ նա մի քիչ փորում էր թիզը՝ և տեսնում էր, որ գեւ շատ խորն է ոսկին, թիզը՝ վար էր ձգում և առնում էր բահը՝ և բահը հով սկսում էր հողը գուբա նետել հորեւ մէջեց.

յետոյ նորից՝ երբ տեսնում էր որ բահի փորածովն էր ոսկին զուրս չի գալ՝ ակսում էր փայտատը ձեռք առնել. և այսովէ՛ աշխատում էր նա շարունակ չորս օր: Նրա փորածը երեք սաժէննեց էր արդէն անց էր. բայց ինքը՝ չէր նկատում. իսկ Տիգրանը հորի հզերքին նստած՝ շարունակ առում էր, թէ՛ «Ահա, քիչ մնաց, մի երկու փայտատ և»: Սիմօնը այդ խօսքիրը լսելով՝ աւելի եռանդի էր գալիս. նա ուշք չըդարձնելով իր դէֆքից հասզ քրտինքին, բարձրացնելով փայտատը՝ անպէս էր խիում գետնին, որ շրջակայ բլուժները, սարհը անգամ թունդ էին առնում, ու կաթես, վլում էին հորի մէջ. որովհետև՝ նա ուխտել էր որ պահնձով ոսկի ակաք է հանձր, զորս չէր իր այդ աշխատանքը. Այսովէս նա այնքան փօրեց, որ հայր մէջ ինքը փօրքիկ եսելու մեծութեան էր երեսմ, Յանիկած, նա՝ դործիքները ձեռքից դէն ձգեւով հորի մէջեց բարձր ձայնով գորաց.—

—«Տիգրան, զօր ինձ խարիցին. այստեղ ոսկի չըկա՞մ:

Այդ ժամանակ Տիգրանը մի աշագին քար ձեռքը առաւ (որ պատրաստ դրել էր իր մաս) ու կանգնեց հորի պոկին.

—«Գէ՛հ, Սիմօն, քովի մողերգ ինձ առը, եթէ ոչ կըճգիմ այս քարը ուզգակի գլխիդ ու ջաշգ ու փշուր կանեմ». Երկու ձեռքքը քարը վեր բարձրացրած Տիգրանը ուզում էր ձգել Սիմօնի գլխին:

Սիմօնը՝ աղաղակ, ճիշ, աբցունք. բայց որանցից ոչ մինը չէր շաշտում նրա գութը. նա սինդ բռնած քարը ևսք բռունցքների մէջ՝ շարունակ

գոռում էր. «Դէ՛հ, պէտք է տամս վողերդ, ասա, եթէ ոչ կըցկիմ, տես, ահաւասիկ՝ քեզ մահացոցից քարը. շնոր արա, մի պատասխան», Բայց Սիմօնը շարունակ լալիս էր. Խնդրում էր խզմալ իր մատադ հասակին: Բայց՝ երբ տեսաւ, որ էլ հնար ըլքայ, քարը ցկում է անգութը իր գլխին, հանեց ծոցից երեք հազար ըուբլի և թոկի ծայրին կապեց. Տիգրանը վեր քաշեց թոկը. բայց երբ տեսաւ, որ Սիմօնի ուղարկածը երեք հազար է, բարկութեամբ գոռաց:

—«Այս լինչ ես ուղարկում, գէ՛հ, շնոր, միւսն էլ առաջ թէ՛ ոչ կըճգին, հա»:

Սիմօնը տեսնելով, որ ինքը ոչ կարող է փախչել և ոչ էլ մի տեղից օգնութիւն գտնել. ուստի՝ եր կեանքը մահից ազատելու համար, կապեց թոկին այս անգամ հինգ հազար ըուբլի. այն, եր արեւն քրտինքով վաստակած փողերը ու իրդալի ձայնով ասաց,—

—«Ահա իմ բոլոր փողերը, խզմա իմ կեանքին»:

—«Դարձեամ պակաս. . . զու չես լառմ իմ խօսքերին՝ հա», փողերը զնելով գրպանը, բարձրացրեց քարը՝ որ պէտք է ճէր Սիմօնի գլխին, յանկարծ նա բղաւելով ասաց.—

—«Ահա բոլորը, և սէր Աստուծոյ, մի ձգեր. այլ չըկա՞մ, մի կուպէկ անգամ, հաւատացիր»:

Տիգրանը այդ հինգ հազարն էլ տռնեւով, փակաւ, գնաց, Սիմօնին թողնելով այդ հորի մէջ կենդանի:



Անցնում էին երկար ու ձիգ ժամը ով նոռոք
աշխատ սպա վաստակում սպա նորոգ ու ջնդ

Անցնում էին երկար ու ձիգ ժամերւում ալուս

Սիմոնը հորի մէջ դեռ չաբարւում էր նա ուստի նատեղի շինելով, բարձրանում էր մինչի հորի կէսը ու գրամք, ընկնում էր նորից յատակը, այս պէս կըկնելով մի տասը, քսան անգամ՝ և վերջապէս՝ գուրս եկաւ ալնտեղից՝ ու տրտում, տխուր գիմեց դէպի քաղակ. նա ճանապարհին՝ այսպէս ողբում էր եւ անցեալը.—

«Այս, մտադիր էի գնալ հայրենիք, որովհետեւ իմ ցանկութիւնս կատարւուել էր. բայց՝ տեսնում էր բազզը ինձ լին արաւ. բնչակս նա խլեց հինգ րուսում իմ շորս հինգ տարուայ. ճակատի քրտինքով վաստակած կրակները. իսկ այժմո՛ ալսպէս գնալ հայրենիք, դատարկ գրապանով. ոչ հապա ինձ. նորից չորս հինգ տարի իմ կեանքը անցկացնեմ օտարութեան մէջ, դարձեալ ո՛չ, ուրեմն՝ պիտոյ է վերջ տալ իմ մատադ կեանքին. այդ ևս սարսափելի է. ևս ուղում եմ զեռ ասպել, որպէսզի մի անգամ էլ տեսնեմ իմ սիրելի ծնողներիս», այսպէս ինքն լրան խօսելով գնում էր նա և ինքն էլ չըգիտէր, թէ նուր:

Անցաւ մի քանի օր. նա շարունակ խելագարի նման՝ ման էր գալիս լրոցներում անօթի, ծարու.

Մի անգամ էլ գիշեր ժամանակ դարձեալ նըստել էր նա փողոցում մի քարի վրայ ու հանդարտ հեկեկում էր, մատաքերելով իւր հայրենիքը ու իւր գլխի անցածը: Այդ ժամանակ նըստ մօտեցաւ միջակ հասակով, ու երկար բեկերով մի մարդ,

որի աւագակալին անունը հոչակուած էր ամենայն երկիր, ու հարցրեց՝

— «Դու լին գործով ես պարտպում, սիրելիս»:
Սիմոնը՝ իւր գլախ անցածը սկսաւ մի առ մի պատմել նըստ, այն նպատակով՝ որ գուցէ մի ոգնութիւն գտնի նըստից:

— «Նաև եօ լսդում քո վիճակի վեայ, որովհետեւ դու բացի ես եղել, իսկ չարերը խաբելով այս օրին են ձգել. բայց այնու ամենայնիւն ես քեզ պէտք է բաղդառացնեմ, ու առաջուան վիճակիտ հասցնելով, վաղը խլոյն ճանապարհ պէտք է գցեմ քո հայրենիք», ասաց աւագակը ձեռքը Սիմոնի ուսին գնելով:

«Խնչպէս», զարձացած հարցրեց Սիմոնը:

— «Ես քեզ կասկմ, թէ ինչպէս. եթէ այս գիշեր ինձ հետ աշխատիս»:

— «Ո՞հ, լին է ասում, իմ կորուցած գումարս նա ինձ տայ ու վաղն էլ հայրենիք ուղարկէ, միայն թէ ես աշխատիմ այս գիշեր նըս հետ, ով կինայ չընդունիլ՝ մի այսպիսի առաջարկութիւն. եթէ ո՛չ անմիտը. Ո՞հ, բարի հերետակ, քեզ ով ուղարկեց իմ մօտ, պատրամու ևմ ամենաղջուար աշխատանքը էլ», ասաց Սիմոնը ուղքի կանգնելով:

— «Ուրիմն ժամանակ չըկորցնենք, սիրելիս. օգտովինք այս մուշ խաւարից: Մէկեք աղան յայտնի է իւր ժամանութեամբ ամրողջ քաղաքին. նա ունի հարիւր միլիօն կարողութիւն. բայց՝ ընացելով այդքան հարստութեանը՝ նա խնայում է մի կուէկ աղքատին տալու. ուրեմն՝ գրանից սկսկելը մեղք է. միասին կըդնանք, դու՝ դռան առաջ

կանգներ, իսկ նու ներս մտնելով՝ զուրս եմ բերում նշա թանկագին իրերը՝ ու քեզ եմ յանձնում, իսկ դռն կըտանես իմ որոշած տեղում՝ կըսպահես, ու նորից յիշ ես դառնում. այսպէս մէկ գեղիսուայ մէջ՝ մինք միլիօններ կըվաստակենք. և դռն քո բաղձանքեն հասած, վաշը իսկոյն հայրենիքիդ հանապարհը կըբռնես».

«Ո՞հ, աւագակութիւն, լինչ է ասում: բայց վոյթ չէ, կանեմ, միան թէ իմ կորցրած տառն ի երեք հազարս ձեռք բերեմ: Պէտք, գնանք ուրիշն քո մտադրած գործին, սիրելիս», ասաց Սիմօնը ու դիմեցին Մէլիք աղայի բնակարանը, ճանապարհին՝ նա ցոյց տուեց Սիմօնին մի աւերտի բնակարան, որտեղ որոշել էր թագցնել Մէլիք աղայի տանից բերած իրեղենները:

Մէ քանի բոպէկց յետոյն նրանք ացդէն կանգնած էին Մէլիք աղայի դուան առաջ, ու աշխատում էին կոտրել դուռը: Եւ ահա, վերջառէին բացուեց դուռը, ու սկսուեց կողապտութիւնը: Աւագակը ձեռքը ընկածը բերում տալիս էր Սիմօնին, որը կանգնած դռած առաջ՝ սպասում էր նրոն, իսկ վերջինն՝ առնելով նրա ձեռքից, տանում, զնում էր այն աւերտակ բնակարանի մէջ՝ ու նորից վերադառնում: Այսպէս չարունակուեց մի քանի անգամ:

Մէ անգամ էլ եշք, նա բերում էր իրեղը ու յանձնում էր Սիմօնին, այդ իսկ օրովէին արթնացան Մէլիք աղայի ընտանիքը, ու շլոթուած՝ այս ու այն կողմը վազվըզելով՝ աղաղակում էին:

— «Գիշը, գիշը, բանեցիք, և սէր Սատուծոյ»:

Հինց այդ ժամուն՝ նրանց աղաղակը լսելով վրայ հասան մի խումբ գիշերապահներ ու բանեցին Սիմօնին, որը թանկագին իրեղը շալակած փախ: ում էր մի տեղ սահսրապուելու համար. իսկ իւր ընկեր աւազակը արդէն հարսկեկութիւնը փախել գնացել էր:

Միւս օրը Սիմօնի գործը վճռեց դատարանը. բայց լինչ, գինգ տարի բանտարկութիւն. այն օր ուանից շատայեցին նրա ոտները, ու բանտարկեալի շորեր հագցնելով, գրին բանտը:

Ո՞հ, թնչ սոսկալի էր նրա վիճակը. նա անցկացնում էր եր անէն մի սոպէն՝ ազի ասցունք թափելով, հալքենիքի կարստը քաշելով. նրա բանտարկութիւն ան մի տարբին զեռ նոր էր լրացել, բայց՝ նա այնքան զեզնելու այնքան մաշուել էր, որ նրան՝ էլ ոչ ոք չէր կարողանում ճանաչել. նա կատարեալ կմախք էր գառել, ուրիշ ուշինչ: Մէ իրկու օր՝ հագիւ լիէ արեիս: Նկատելով կը ծահը՝ սկսաւ ոգբալ եր գառն վիճակի և սխալութիւնների վրայ, և մտհուան վերջին սոպէն մի նամակ գրեց եւր ծնողներին: Երբ որ նամակը վերցացուց, ինզրէց բանտի պահապանից, որ սատանայ նամակը և ողարկէ եր հայրենիքը, բայց՝ նա ներժեց, հայհոյելով նրան:

Սիմօնը տեսաւ, որ մահը մօտ է, ևր ծնողներից հեռու, և նրանց սիրոյ կարուսով՝ պէտք է մտնեաւ հողի տակ՝ բաց արեց բանտի փոքրիկ պատուհանը՝ ու նամակը վայր ձգեց գետի մէջ, որը՝ բանտի պատին շփուելով գնում էր ներքեւ, ուսի արևմուտք: Նամակը՝ գետի երեսից՝ այս ու այն

կողմը սուբալով, գնաց, հեռացաւ բանտեց։ Խոկ Սիմօնը՝ բանտի պատուհանը փակելով նստեց չոր տախտի վրա, և մաշուան վերջին արտասուրը թափելով աչքերից՝ աւանդեց հոգին։ Նրա վերջի խօսքերը այս էին, որ հազիւ իր մաշուած կոկորդից գուրս եկաւ։

Աշակերտ աշխարհց բաժանում եմ, Բայց՝ իմ ծնողքս չըգիտեն։

Զարերին հետևելով ես մեռնում եմ, Բայց՝ իմ ծնողքս չըգիտեն։

Հիմա՝ զնանք, շտամինք նամակի յետելց, և տեսնենք՝ թէ թնչ է լինում, անցնում է արդեօք մի որ և իցէ մէկի ձեռք, թէ այդաէս կորչում, ոչնչանում է։ Նա՝ արագ արագ զնում էր գետի մէջանցեց՝ դէպէ ներքե։ կարծես նա շտամում էր մէկ ժամ առաջ այդ գոյժը մէկին հաղորդելու։ Գնում էր նա ոլոր-մոլոր՝ անտառնէրի մէջերով, սարերի արանքնեցից։ և մէկ էլ՝ ապառաժ լեռների կուրծքին զարնելով՝ կարծես ուզում էր ճեղքիլ նըանց և աւելի կարճ ճանապարհով ընթանալ։ Եւ՝ աշակ, գնաց, գնաց ու կարծես Աստուծոյ հրամանով կանգ առաւ գետի հէնց այն ափում, որտեղ տարածուած էր Գրիգոր աղայի ընդարձակ սկաբոտէզը։ Այդ ժամանակ՝ երեկոյ էր. նրա ծառան դուրս էր եկել պարտէզ ու ջրում էր ծաղիկները։ Նա երբ որ եկաւ ջուր տանելու գետից, տեսաւ նամակը, կուացաւ ու վերոց, նայեց հասցէնն, բայց չէր կարդացում, որովհետեւ՝ թշջուելուց ջնջուել էր. յետոյ բաց արեց կնեքը ու սկսեց

կարդաւ։

— «Իմ սիրելի հայրիկ և մայրիկ։ «Ձեր միակ ուղին, ձեր կեանքի մխիւլացիւր, «ձեր աղագայ յոյսը, — Սիմօնը՝ այսօր իր սրտի «խորքեց տաշիս է ձեզ իւր վերջին բարեկը։ Գիտեմ, «որ գուք չըգլանէթք իմ որտեղ լինելը, որովհետեւ՝ «ես ձեզ չէի յայտնում՝ ամաչելով իմ գլխի գաւած փորձանքներեց։ Սիրելի հայրիկ, և մայրիկ։ «Եւ այժմ զարձեալ միք գիտենասը, թէ՝ որպես է Եւ աղուել ձեր միակ որդու դիակը։ Գնաց ձեր «Սիմօնը, սիրելի ծնողներ, լացէք նրա յետենց։ «Իմ վաղաժամ մահուան, լիմ ծաղիկ հասակին սև «գերեզման իշնելու պատճանաւը՝ գնւք էք, գիտէք, սիրելի ծնողներ, թէւ ինձ խրատում էք դեռ «փոքր ժամանակից, թէ՝ ոմլ ինչ ասէ մի հաւասար»։ իսկ ես՝ ձեզ չէի լսում, և ով ինչ ասէր հաւատում էի ու գործում՝ առանց քննելու, «Եմ կանից կրազոց է ինձ վնաս հասնել։ և այն, «իսկապէս էլ հասաւ։ Այժմ ես բաժանում եմ աշխատից, ու մտնելմ մնութ գերեզման, և հիմա՝ «սիրելի հայրիկ, և մայրիկ՝ սեբմանեցէք ձեր այդ քարե խրատները լինձ նման ուրիշ զաւակների «սրտերում։

«Սիմօն Գընգուսովից 0 հաննեսեանց»։

— «Ո՞հ, իմ աղայի որդին է գրել՝ Սիմօնը, նա մեռնել է արդէն, լինչ սոսկալի բան»։ վերջացնելով նամակը՝ շատ սգաց իր աղայի որդու կորստեան վրայ։ և արտասուալի աչքերով վազեց յայտնելու այդ գոյժը նրա թշուաւ ծնողներին։

— «Պրձմը ծաղիկները ջրելուց, հարցըց Գրի-

գոր աղան ծառալին, որ նստած էր սենեակում ու
զբոյց էր անում լւս կնոջ հետ:

— «Ոչ»:

— «Ասլա լինչու եկար»:

— «Այս նամակը բերվ' ձեր որդւոյն գըածն է.
որք՝ չուրը բերել՝ կանգնեցուցել էս մեր պարտիզե
մօտ», ասաց ծառան ու նամակը ւանձնեց աղալին.
— «Սիմօնից, մեր որդուց», ասաց մայրը՝ վեր

թռչելով:

— «Այս»:

Նա խկոյն խլելով ամուսնու ձեռքից նամակը՝
որ գեռ նոր էր բացել, ասաց, —

— «Տներ, տուր լինձ ես կարդամ, դու իմացեք»:
Առաւ նամակը, ու եցը մի քանի տող կարդաց,
ձեռքերը թուլացաւ, աչքերը աբտասունքով լցուե-
ցաւ, նամակը երեսին ծածկելով՝ վաւը ընկաւ ա-
թռուեց՝ հառաչելով. —

— «Աւմազ, մեւամձ է որդիս» . . .

Հայրը նոյնալիս «Սիմօն ջան, Սիմօն ջան» գո-
շելով՝ արտասուելով մոռւեց լատալի վրայ:

Սրանց թշուառ վիճակը, և ցաւալի կեանքը՝
աւելուրդ եմ համարում. մի ըստ միոջէ նկատագրել.
որովհետեւ՝ սիրելի բնթերցակը՝ արդէն զգում է այն
ամէնք՝ ինչ որ մենք փակագծում ենք այս գրքոյ-
կես մէջ:

7/1.1922

Վ. Ա. ԱՅԱՍՏԻԿՅԱՆ

Գրքոյիկոս մէջ՝ մի քանի տարագըութեան սխալներ
դուրս եկան՝ և չուզեցա վրխակ անել... և եհարկէ ըն-
թերցողը կարգալով կներդ:

10886



2013

